

433



# Ֆ. ԵՆԳԵԼՈ

ՊԱՏՐՈՒԿԻՆ ՄԱՏԵԲԻԱ ԻՉՈՒ  
ՄԱՍԻՆ

ՀԿ13

Պ-30

Պ Ե Տ Հ Հ Ա Տ

ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՆՈՒՅՆԻՑ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՒԵՐԻ, ՄԻԱՅՆ 13 MAY 2005

03 NOV 2009

3K13 ԱՀ

7-30

# Ֆ. ԵՆԳԵԼՈ

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԻ  
ՄԱՍԻՆ



Պ Ե Տ Հ Շ Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ֆ. Ենգելսի «Պատմական մատերիալիզմի մասին» հոդվածը դրված է 1892թ.: Սկզբնապես տպագրված է յեղել՝ վորակես Ենգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուսումնակայից դեպի գիտություն» բրոշյուրի անդիմերեն թարգմանության ներածություն։ Ներկա հրատարակության մեջ տպագրվում է այն ձևով, ինչ ձևով հրապարակված է յեղել Ենգելսի կողմից գերմանական սոցիալ-դեմոկրատիայի «Նոյե շայտ» ժուռնալում։ Ռուսերեն թարգմանության տեքստը վերցված է Մարքսի ընտիր յերկերի յերկհատորյակից (Կարլ Մարքս, Բնտիր յերկեր յերկու հատորի մեջ, հատոր I):



Ф. ЭНГЕЛЬС

### ОБ ИСТОРИЧЕСКОМ МАТЕРИАЛИЗМЕ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1909

## ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻ ԶԱՍԻՆ

...Յես շատ լավ դիտեմ, վոր այս բրոցյուրի բովանդակությունը կհանդիպի բրիտանական ընթերցող հասարակության նշանակելի մասի առաջարկությանը: Սակայն յեթե մենք, կոնտինենտի բնակիչներս, թեկուղ վորեւ չափով հաշվի առնելինք բրիտանական «պատվարժանության», այսինքն՝ բրիտանական ֆիլիստերության նախապաշտունքները, ապա գործն ավելի վատթար գրության մեջ կլիներ, քան այժմ: Առաջարկվող բրոցյուրը գրված է ի պաշտպանություն այն բանի, ինչն մենք անվանում ենք «պատմական մատերիալիզմ», իսկ մատերիալիզմ բառը բրիտանական ընթերցողների ճնշող մեծամասնության լուղության համար հնչում է վորպես սուր դիսունանո: «Ազնուատիցիզմ»—ելի մի բանի նման է, իսկ մատերիալիզմ—միանգամայն անթույլատելի բան է:

Յել այնուամենայնիվ ամբողջ արդի մատերիալիզմի սկզբնական հայրենիքը, սկսած XVII դարից, հանգիստանում է հենց Անգլիան:

«Մատերիալիզմը Մեծ Բրիտանիայի հարազատ զավակն է: Նրա (Բրիտանիայի) սիոլաստիկ Դուռս Սկոտն արդեն իրեն հարց եր տալիս՝ չի կարող արդյոք մատերիան մտածել:

«Այդ հրաշքը կատարելու համար նա կոչ արեց աստծու ամենակարողությանը, այսինքն հենց աստվածաբանությանը հարկագրեց մատերիալիզմ՝ քարոզել: Բացի այդ ել նա նոմինալիստ եր: Անգլիական մատերիալիստների մոտ նոմինա-

լիզմը հանդիսանում է վորպես գլխավոր տարր, և հենց  
ընդհանրապես նա իրենից ներկայացնում է մատերիալիզմի  
առաջին արտահայտությունը<sup>1</sup>:

«Անդիմական մատերիալիզմի իսկական նախահայրը Բե-  
կոնն է<sup>2</sup>: Բնադիմությունը նրա համար հանդիսանում էր  
վորպես ստույգ գիտություն, իսկ վորքնական Փիզիկան՝  
ընադիմության ամենակարևոր ճյուղը: Անաբարդորին իր  
հոգույոմերիաներով, և Ֆեմոկրիտին իր ատոմներով նա հա-  
ճախ վկայակոչում է վորպես ամառիտեաների<sup>3</sup>: Համա-  
ձայն նրա ուսմունքի՝ զգայարանները խարուսիկ չեն և ծա-  
ռայում են վորպես ամեն մի իմացության աղբյուր: Ամեն  
մի գիտություն փորձնական գիտություն է և կայնում է  
որանում, վորպեսզի զգացական ալյալի վերաբերմաքը ուա-  
ցինալ մեթոդները զործադրի: Ռացիոնալ մեթոդի գլխավոր  
սպայմաններն են հանդիսանում ինդուկցիան, անալիզը, հա-  
ժեմատությունը, դիտողությունը, փորձը: Մատերիայի  
ընածին հատկությունների մեջ առաջինն ու կարեսրազույնը  
շարժումն է, վոչ միայն մեխանիկական ու մաթեմատիկա-  
կան շարժման իմաստով, այլ առավել ևս վորպես ձրդ-  
տում, վորպես կենուական վոգի, լարումն, —մի խոսքով՝  
գործածիլով Յակով Բեմեյի արհանձայտությունը, մատե-  
րիայի զալը (տանջանքը): Վերջինիս սկզբնական ձևերը,  
ըիայի զալը (տանջանքը): Վերջինիս սկզբնական ձևերը,

\* Մարքսի վերջին Փրազն անգլիերեն անքսուում բաց և թողնված:  
Դրա փոխարեն նոգելու տակիս և հետեւալ բացարությունը, վորը  
գուաքարեն բացակայում է. «Qual»—դա Փիֆոսփայական  
գլեմաներեն տեքստում բացակայում է. «Qual»—դա Փիֆոսփայական  
բառախաղ է: Qual տառացիորեն նշանակում է տանջանք, ցավ, վորը  
բառախաղ է գեղի վորեն զործողություն: Միևնույն ժամանակ միտիկ  
մզում և գեղի վորեն զործողություն: Միևնույն ժամանակ միտիկ  
մզում և գեղի վորեն զործողություն: Նրա «Qual»-ը, դա—ի հա-  
տիւներեն qualitas (հատկություն) բառից: Նրա «Qual»-ը, դա—ի հա-  
տիւներեն կամ ականական ականական բառից: Ականական բառը պատկա-  
նում է այդ զարգացմանը: Խմբ:

«Բեկոնի, իր առաջին ստեղծողի մոտ, մատերիալիզմն իր  
մեջ պարունակում է, զերևս նախիլ ձևով, բարձակողմանի  
զարդացման սաղմեր: Բանաստեղծորեն-զգացական լուսա-  
պակով ըրջապատված մատերիան սիրավիր կերպով ժըր-  
տում է մարդուն: Իսկ ուսմունքն ինքը, վոր չարաբրված  
և ափորիզմների ձևով, ընդհակառակը, գեռես լեցուն և  
աստվածաբանական անհետողականություններով:

«Իր հետագա զարդացման մեջ մատերիալիզմը դառնում  
է միակողմանի: Հօրսը<sup>4</sup> հանդիսանում է վորպես բեկո-  
նան մատերիալիզմի սիստեմատիկը: Զգացականությունը  
դրյում է իր բույրը և փոխարկվում է յերկրաչափի  
արսարակում զգացականության: Ֆիզիկական շարժումը զոհ  
և բերվում մեխանիկականին կամ մաթեմատիկականին, յերկ-  
րաչափությունը հայտարարվում է վորպես դիմավոր գի-  
տություն: Մատերիալիզմը մարդուն թշնամի յե դառնում:  
Մարդուն թշնամի անմարդին վոգին իր սիրեայում հաղ-  
թահարելու համար մատերիալիզմն ստիպված է լինում ինքը  
մեռցնել իր մարմինը և ասկետ դառնալ: Նա հանդես և գա-  
լիս վորպես խոհական եյություն, սակայն դրա փոխարեն  
նա անինա հետեւողականությամբ զարգացնում է խոհակա-  
նության բոլոր հետեւությունները:

«Յեթե մեր զգացմունքները հանդիսանում են վորպես  
աղբյուր մեր բոլոր իմացությունների, —յելնելով հեկոնից՝  
զատում և Հորբաշ, —ապա հայտեցողությունը, մտածմունքը,  
պատկերացումները և այլն—այդ բոլորը վոչ այլ ինչ են,  
քան յեթե ուրվականներ այն մարմնավոր աշխարհի, վորն  
ավելի կամ պակաս չափով աղատադրված է իր զգացական  
ձևից: Գիտությունն այդ ուրվականների համար կարող է  
միայն անուններ գտնել: Միևնույն անունը կարող է արվել  
միթանի ուրվականների: Նույնիսկ հնարավոր և հենց ա-  
նունների անվանումների գոյությունը: Սակայն հակասու-  
թյուն կլիներ, մի կողմից, բոլոր զարգափարների ծագումը  
վերաբերել զգացական աշխարհին, իսկ մյուս կողմից՝ պնդել,  
վոր բառն ավելի շատ բան և նշանակում, քան հասարակ

բառը, վոր մեր պատկերացման մեջ արտացոլվող յեզակի ելություններից բացի Հնարավոր են ևս ինչ-վոր ընդհանրական ելություններ: Անմարմին սուբստանցիան—դա, ընդհանրական նույնպիսի հակասություն ե, ինչպես անմարմին մարմինը: Մարմինը, գոյությունը, սուբստանցիան—այս բոլորը միևնույն ուեալ գաղափարն ե: Զի կարելի մտածողությունը բաժանել այն մատերիայից, վորը մտածում ե<sup>\*</sup>: Մատերիան Հանդիսանում է բոլոր փոփոխությունների սուբյեկտը: «Անվերջ» բառն անիմաստ ե, յեթե նա չի նշանակում մեր հոգու՝ անվերջ կերպով գումարում կատարելու ընդունակությունը: Քանի վոր միայն մատերիան ե, վոր մատչելի յե ըմբռնմանը, ճանաչելի յե, ապա ուրեմն վոչինչ հայտնի չե աստծու գոյության մասին: Միայն իմ սեփական գոյությունն ե ստույգ: Մարդկային յուրաքանչյուր կիրք մեխանիկական շարժում ե, վորն ունի սկիզբ ու վերջ: Զգտումների որյեկտներն—այն են, ինչ մենք բարիք ենք անվանում: Մարդը յենթարկվում է նույն որենքներին, ինչ վոր բնությունը: Իշխանությունն ու աղատությունը նույնական են:

«Հորբար սիստեմի բերեց Բեկոնի ուսմունքը, սակայն ամելի ճիշտ կերպով չիմնավորեց նրա Հիմնական սկզբունքը—իմացությունների և իդեաների ծագումը զգացական աշխարհից: Լոկին եր «Փորձ մարդկային խոհականության ծագման մասին» աշխատության մեջ այսպիսի հիմնավորում տվեց<sup>5</sup>:

«Այնպես, ինչպես վոր Հորբար վոչնչացրեց բեկոնյան մատերիալիզմի թեխստական նախապահարմունքները, նույնական կողմանը կողմանունը, Դոգուելը, Կոուարդը, Հարտլին, Պրիստուիս և լոկին՝ ջախջախեցին լոկիյան սենսուալիզմի աստվածին և այլն՝ ջախջախեցին լոկիյան սենսուալիզմի աստվածին միշտ մի հարմար և հեշտ միջոց՝ կրոնից աղատվելու համար, —դունե մատերիալիստի համար»<sup>\*\*</sup>:

\* Ընդհանուր կողմից անդիւրեն տեքստում: Խմբ.:

\*\* Տե՛ս Մարքս և Ենգելս, «Святое семейство», Ֆրանկֆուրտ Մայնի գրա, 1845 թ., էջ 201—204 [Յերկ. և. III, էջ 157—158]: Խմբ.:

Սյսպես եր գրում կարև Մարքսը ժամանակակից մատերիալիզմի բրիտանական ծագման մասին: Յեվ յեթե ներկայում անդլիացիներն իրենց առանձնապես չոյզած չեն զգում իրենց նախնիքների արժանիքների այդ ճանաչմամբ, ասդայդ մասին ցավել կարելի յե միայն: Յեվ այնուամենայիլ կամածի յենթակա չե, վոր Բեկոնը, Հորբար և Լոկիը հայրերն եյին Փրանսական այն մատերիալիստների փայլուն դպրոցի, վորոնք չնայած Փրանսացիների գեմ ցամաքի վրա և ծովում գերմանացիների ու անդլիացիների տարած բոլոր հաղթանակներին, XIX դարը դարձնում են առավելապես Փրանսական դար և դա—շատ ավելի առաջ, քան այդ դարի վերջը պատկող Փրանսական հեղափոխությունը, վորի արդյունքները մենք—ինչպես Անդլիայում, նույնպես և Գերմանիայում—մինչև այժմ ել ձգտում ենք կլիմայավարժել մեղ մոտ:

Այդ բանը ժխտելու վոչ մի հնարավորություն չեա: Յերբ կրթված ոտարերկրացին XIX դարի կեսերին բնակության համար Անդլիա յեր աեղափոխվում, ապա նրան ամենից ավելի զարմացնում եյին,—այլ կերպ նա այդ բանը չեր ել կարող ըմբռնել,—անդլիական «պատվարժան» միջին դասակարգի կրոնական կեղծ բարեպաշտությունն ու ըթամտությունը: Այն ժամանակ մենք բոլորս մատերիալիստներ եյինք կամ, առնվազն, շատ ուղիկալ աղատամիտներ, և մեզ համար անհասկանալի յեր այն փաստը, վոր Անդլիայում գրեթե բոլոր կրթված մարդիկ հավատում եյին ամեն տեսակի անհավանական հրաշքների և վոր նույնիսկ գեղողները, ինչպես Բեկլենդն ու Մանտելը, խեղաթյուրում եյին իրենց գիտության տվյալները, վորպեսզի այդ տվյալները շատ ել խիստ կերպով չտարածիտվեն աշխարհի ստեղծագործության վերաբերյալ մովսեսյան լեգենդայի առասպելներից: Մեզ համար անհասանելի յեր թվում, վոր այնպիսի մարդիկ գտնելու համար, վորոնք կրոնական հարցերում համարձակվեյին հենցիւ իրենց սեփական բանականության վրա, պետք եր գնալ անկիրթ մասսայի մոտ, «անդլիա ամբո-

իսի» մոտ, ինչպես այն ժամանակ արտահայտվում է յին,— բանվորների մոտ, համարական սոցիալիստների՝ Ռուբերտ Ոռունի հետեւորդների մոտ:

Սակայն ամ ժամանակվանից դեսը Անգլիան «քաղաքակարթվել է»: 1851 թ. ցուցահանդեսն անգլիական կողեական փակվածության համար հնչեց վորակն թաղման զանդ: Անգլիան աստիճանաբար ինտերնացիոնալիզացիայի յենթարկվեց ուտելու և խմելու մեջ, սովորությունների մեջ, պատկերացումների մեջ, նա այդ բանում այնպիսի հաջողություններ ձեռք բերեց, վոր յես ավելի ու ավելի յեմ ուզում ցանկություն հայտնել, վորպեսզի անգլիական միքանի սովորություններ կոնտինենտում նույնպիսի ընդհանուր գործադրություն գտնեն, ինչպիսին գտել են Անգլիայում կոնտինենտի միքանի սովորություններ: Մի բան անկասկած է. Պրովանսի յուղի տարածումը (վոր մինչև 1851 թ. հայտնի յեր միքայն արխուկրատիային) ուղեկցվում եր կոնտինենտալ սկեպտիցիզմի ճակատագրական տարածմամբ կրոնական հարցերում. բանը հասել եր մինչեւ այնտեղ, վոր ազնոսությունը, թեև նա զեռևս այնքան ել ազնիվ չի համարվում, ինչպես անգլիական պետական յեկեղեցին, այնուամենայնիվ պատվարժանության տեսակետից կանգնած և բապտիստների աղանդի հետ գրեթե միևնույն աստիճանի վրա և համենայն աղանդի հետ գրեթե միևնույն աստիճան վրա՝ քան «Փրկության բանադր»<sup>7</sup>: Յեկ յես չեմ կարող ազատվել այն մտքից, վոր շատերի համար, ովքեր ամբողջ սրասով ցավում են անհավատության այդինքնի առողջապահ աստիճանի առթիվ ու նոզովում այն, միեւթան արողքեսի առթիվ ու նոզովում այն, միեւթան կմանալ, վոր այդ նորաթուխ խեցաները ուտարերկրյա ծագում չունեն, իրենց վրա չեն կրում Made in Germany, պատրաստված ե Գերմանիայում դրոշմը, ինչպիս վոր առորյա գործածության բաղմաթիվ այլ առարկաներ. վոր նրանք, ընդհակառակը, հին-անգլիական ծագումն ունեն և վոր նրանց բրիտանական նախահայրերը սրանից յերկու հարյուր տարի առաջ շատ ավելի հեռու ելին գնում, քան նրանց այժմյան հետնորդները:

Իսկապէս, ի՞նչ լան և աղնոստիցիզմը, յեթե վոչ «ամաչկոտ»\* մատերիալիզմ: Աղնոստիկի հայացքը բնության վերաբերմամբ ամբողջովին մատերիալիստական է: Բնության ամբողջ աշխարհը կառավարվում և որենքներով և բացարձակապես բացառում և արտաքին վորեւ ներգործություն: Բայց, —իսուհեմարար ավելացնում և աղնոստիկը, — մենք ի վիճակի չենք ապացուցելու մեզ հայտնի աշխարհից դուրս դանվող վորեւ բարձրագույն եյության գոյությունը կամ չգոյությունը: Այս վերապահումն արժեք ուներ այն ժամանակներում, յերբ Լապլասը Նապոլեոնի այն հարցին, թե ինչու այդ մեծ աստղաբաշխի «Mécanique Céleste»-ում [«Յերկնային միխանիկայում»] վոչ մի անգամ չի հիշատակված աշխարհի արարչի անունը, հազարտ պատասխան տվեց. «Je n'avais pas desoin de cette hypothèse» [«Յես այդ հիպոթեզի կարիքը չունեյի»]: Իսկ ներկայումս մեր պատկերացումը տիեզերքի մասին նրա զարգացման մեջ՝ ամենին տեղ չե թողնում վոչ արարչի, վոչ ամենակալի համար: Վորեւ բարձրագույն եյության ընդունումը, վորը ամբողջ գոյությունը ունեցող աշխարհից դիմենք, վոր մեր գդալարանին իրենց մեջ տալիս են իրենց միջոցով ըմբռնվող իրերի ճիշտ սկատկերացումները: Յեկ այնուհետև նա մեզ հաղորդում է, վոր յերբ ինքը խոսում է իրերի կամ նրանց համարությունների մասին, ապա ինքն խեցական նկատմամբ ունի վոչ մի ստույգ բան: Վայց, ավելացնում է նա, մենք վո՞րտեղից դիմենք, վոր մեր գդալարանին իրը մեզ տալիս են իրենց միջոցով ըմբռնվող իրերի ճիշտ սկատկերացումները: Յեկ այնուհետև նա մեզ հաղորդում է, վոր յերբ ինքը խոսում է իրերի կամ նրանց համարությունների մասին, ապա ինքն խեցական նկատմամբ ունի վոչ մի ստույգ բան: Վայց, ավելացնում է նա, մենք վո՞րտեղից դիմենք, վոր մեր գդալարանին իրը վոչ մի ստույգ բան իմանալ չի կարող, այլ՝ միքայն այն պավորությունները, վոր նրանք գործել են իր զգաւորություններում:

\* Անգլիերեն տեքստում ավելացրած ե. «գործածելով լանկաշիրյան արտահայտիչ տերմինը...»: Խմբ.:

յարանների վրա: Խոսք չկա, սա այնպիսի հայեցակետ է, վորն, ըստ յերեւութին, գծվար և հերքել լոկ միայն փաստաբիումով: Բայց նախքան փաստարկել սկսելը՝ մարդիկի գործում եղին: «Սկզբում գործն եր»: Յեկ մարդկային գործունեյությունն այդ գծվարությունը լուծեց շատ ավելի առաջ, քան թե մարդկային խորիմաստությունը հնարել երայն: The proof of the pudding is in the eating.[Պուդինդի ստուգումը կայանում, վոր այն ուսում են]:

Այն մոմենտին, յերբ վորեն իրի՝ մեր կողմից ըմբռնվող հասկությունների համեմատ, մենք այդ իրը գործ ենք ածում մեզ համար,—հենց այդ մոմենտին մենք անսխալ փորձարկման ենք յենթարկում մեր զգացական ըմբռնումների ճշտությունը կամ անձառնությունը: Յեթե այդ ըմբռնումներն անճիշտ են յեղել, ապա տվյալ իրն ըստ անհրաժեշտության ուղարկութելու հնարավորության վերաբերյալ մեր զատողությունն ել անճիշտ կլինի, և այդպիսի ողտագործման յուրաքանչյուր փորձ անխուսափելիորեն անհաջող գուրս կղա: Իսկ յեթե մենք հասնենք մեր նպատակին, յեթե մենք գտնենք, վոր իրը համապատասխանում է յուր մասին ունեցած մեր պատկերացմանը, վոր նա տալիս եւ ոյն հետեանքը, վոր մենք սպասում եյինք նրա գործածությունից, այն ժամանակ մենք ունենք զրական ապացույց, վոր այդ սահմաններում\* իրի և նրա հատկությունների վերաբերմաքը մեր ըմբռնումները համընկնում են մեզնից գուրս գոյություն ունեցող իրականության հետ: Իսկ յեթե, ընդհակառակը, մենք գտնում ենք, վոր սխալ ենք արել, այն ժամանակ մենք մեծ մասամբ շատ շուտով կիրարողաններ գտնել սխալ պատճառը. մենք գտնում ենք, վոր մեր փորձի Հիմքում լնկած ըմբռնումը կամ ինքը թերի ու մակերեսային ե յեղել, կամ ուրիշ ըմբռնումների հետեանքների հետ կապված ե յեղել այնպիսի ձեռվ, վորը չի արդարացվում գործի դրությամբ. զա մենք անվանում ենք զե-

ֆեկտիվ մտահանգումն (ստուգում)՝: Իսկ այնքան ժամանակ, քանի մենք ինչպես պետք և զարդացնում ենք մեր զդայությունները և ողտում ենք նրանցով, քանի մենք մեր գործունեյությունը պահում ենք այն սահմաններում, վորներ դրված են ճշտորեն ստացված և ողակարծված ըմբռնումների միջոցով,—մինչև այն ժամանակ մենք միշտ կդառնենք, վոր մեր գործողությունների հաջողությունը տալիս և այն բանի ապացույցը, վոր մեր ըմբռնումները համապատասխան են [Uebereinstimmung] ըմբռնված իրերի առարկայական [gegenständlich] բնության հետ: Վոչ մի դեպք չկա, վորքան մինչև այժմ մեզ հայտնի յէ, յերբ մենք ստիպված լինելինք յեզրակացնել, վոր մեր զիտականորեն ստուգված զգացական ըմբռնումները մեր ուղեկում արտաքին աշխարհի մասին այնպիսի պատկերացմանը են առաջացնում, վորոնք իրենց բնությամբ չեղվում են իրականությունից, կամ վոր արտաքին աշխարհի և այդ աշխարհի վերաբերմաքը մեր զգացական ըմբռնումների միջին վոյություն ունի բնածին անհամաձայնեցվածություն:

Սակայն այսուղ հանդես ե զալիս ներկանոյան աղնոստիկը և ասում ե. այո՛, հնարավոր ե, վոր մենք ի վիճակի յենք ճշտորեն ըմբռնելու իրի հատկությունները, բայց մենք իրն ինքը վոչ մի, վո՛չ զգացական, վո՛չ մտածական, պրոցեսի միջոցով հասկանալ չենք կարող: Այդ «ինքնին իրը» գտնվում ե մեր իմացության այն կողմում: Դրան արգել չեղելը շատ վաղուց պատասխան ե ավել. յեթի գուշ գիտեք իրի բոլոր հատկությունները, ապա գուշ զիտեք նաև իրն ինքը. այն ժամանակ մնում ե միայն այն մերկ փառագը, վոր հիշված իրը գոյություն ունի մեզնից գուրս, և հենց վոր ձեր զգացությունները հաստատեցին նաև այդ փառագը, ապա գուշ այդ իրն ըմբռնեցիք ամբողջապես առանց մնացորդի, —ըմբռնեցիք կանայան հոչակավոր անիմանալի «ինքնին իրը»: Ներկայումս մենք կարող ենք դրան

\* «Դա մենք անվանում ենք դեֆեկաիվ մտահանգումն» բառերը դիմաներն տեղուի միջ բաց են թողնված: Խմբ:

\* Ընդգծված ե Ենդեւսի կողմից անդիմերեն տեքստում: Խմբ:

ավելացնել միայն, վոր կանտի և պոխայում նյութական իրերի մեր խմացությունը դեռևս այնքան հատվածական էր, վոր նրանցից յուրաքանչյուրի հետեւում կարելի յեր դեռևս թուլատրել առանձին խորհրդավոր ինքնին իրի զոյտություն։ Սակայն այն ժամանականից սկսած այդ անհասանիլի իրերը մեկը մյուսի հետեւից, չնորհիվ գիտության հսկայական արոցեսի, արդեն իմացված են, վերլուծված և դեռ ավելին— վերարտադրված են։ Խակ ինչ բան վոր մենք ինքներս կարող ենք կատարել, ապա մենք, իհարկե, արդեն չենք կարող այն անիմանակի անվանել։ XIX դարի առաջին կեսի քիմիայի համար որդանական նյութերը նույնպիսի խորհրդավոր իրեր ենին։ Այժմ մեկ հաջողվում է նրանց քիմիական տարբերից մեկը մյուսի հետեւից կազմել այդ նյութերը նաև առանց որդանական պրոցեսների ողնության։ Նորագույն քիմիան պնդում է ։ յեթե վորեն մարմնի քիմիական կազմությունը հարտնի յե, ապա այն կարելի յե կազմել իր տարբերից։ Մենք դեռևս, ճիշտ ե, շատ հեռու յենք բարձրագույն որդանական նյութերի, այսպես կոչված սպիտակուցային մարմինների կազմությունը ճշգրտուեն իմանալուց։ սակայն վոչ մի հիմք չկա տարածուելու, վոր մենք, թեկուզ և դարեր անցնելուց հետո, կհասնենք այդ բանին, ապա դրա հետ մեկտեղ մենք կվերաբառադրենք որդանական կյանքը, վորովհետեւ կյանքն իր ամենացած ձեւերից մինչև ամենաբարձրերը վոչ այլ ինչ ե, քան սպիտակուցային մարմինների զության նորմալ ձևը։

Բայց մեր ագնոստիկը, անելով իր Փորմալ վերապահումները, խոսում ու գործում է բոլորովին վորովես թունդ մափակալինա, վորպիսին նա իրոք և հանդիսանում է։ Նա, թերես, կասի, վորքան մեզ հայտնի յե, մատերիան ու շարժումը, կամ, ինչպես այժմ առում են, եներգիան, չի կարելի վո՛չ ստեղծել, վո՛չ վոչնչացնել, բայց մենք վոչ մի աղացույց չունենք այն մասին, վոր թե՛ մեկը և թե՛ մյուսը

մեզ անհայտ վորեւե մի մոմենտում չեն ստեղծվել։ Բայց Հենց վոր գուք փորձեք վորեւե տվյալ դեպքում ոգտազորեն այդ խոստովանությունը նրա զեմ, —նա ըսպեյալես կստիպի ձեզ լրել։ Յեթե նա in abstracto [վերացականորեն] թույլ ե տալիս սպիրիտուալիզմի հնարավորությունը, ապա in concreto [կոնկրետ կերպով] նա այդ հնարավորության մասնին գիտենալ անգամ չի ցանկանում։ Նա ձեզ կասի, վորքան վոր մենք գիտենք և կարող ենք գիտենալ, դոյցություն չունի ափեզերքի վոչ մի արարիչ կամ ամենակալ, վորչափով վոր այդ բանը մեղնից և կախված, մատերիան և եներգիան նույնական չի կարելի վո՛չ ստեղծել, վո՛չ վոչնչացնել։ մեզ համար մտածողությունը եներգիայի ձևն ե միայն, ուղեղի ֆունկցիան։ այն ամենը, ինչ վոր մենք գիտենք, հանդում ե այն բանին, վոր նյութական աշխարհը կառավարվում է անփափիսի որենքներով և այլն և այլն։ Այսպիսով, վորչափով նա գիտության մարդ ե, վորչափով նա վորեւե բան գիտե, այնչափով նա մատերիալիստ ե, սակայն իր դիտությունից գուրս, այն բնագավառներում, վորոնք նրան ոտար են, նա իր չիմանալը թարգմանում է հունարեն լեզվի, անցանելով այն աղնօստիցիվ։

Համենայն դեպս անկասկած է մի բան։ նույնիսկ յեթե յես աղնոսութիկ լինեցի, յես չպիտի կարողանայի այս գըրքույթիում պատմության վերաբերյալ շարադրված հայացքը «պատմական աղնոսութիցիզմ» անվանել։ Կրոնական մարդկի կծաղրեցին ինձ, իսկ աղնոսութիկները զայրույթով կհարցնեցին, մի՞թե յես ուզում եմ ծաղրել նրանց։ Յել յես հույս ունեմ, վոր բրիտանական «պատմաբժանությունը» ես, վորը գերմաներեն կոչվում է Փիլիսոփերություն\*, չափից դուրս չի վրդովվի, յեթե յես անզիներեն, ինչպես նաև ուրիշ շատ լեզուներով, գործածեն «պատմական մատերիալիզմ» արտահայտությունը, այդ տերմինով նշանակելով այն հայացքը համաշխարհային պատմության ընթացքի վերաբերմամբ, վորը

\* «Վորը գերմաներեն կոչվում է Փիլիսոփերություն» բառերը անդիներեն տեքստում բացակայում են։ Խմբ։

բոլոր կարևոր պատմական դեպքերի վերջնական պատճառն ու վճռողական շարժիչ ուժը գտնում է հասարակության տնտեսական զարգացման մեջ, արտադրության և փոխանակության յեղանակների փոփոխությունների մեջ, հասարակության՝ այստեղից բղխող տարրեր դասակարգերի բաժանվելու մեջ և այդ դասակարգերի միջև տեղի ունեցող պայքարի մեջ:

Թերեւ ինձ Ե'լ ալելի զիջողաբար վերաբերվեն, յեթե յես ասլացուցեմ, վոր պատմական մատերիալիզմը կարող է ուղարկար հանդիսանալ նույնիսկ բրիտանական Փիլիսոփրի պատվարժանության համար\*: Յես մատնանշեցի այն փաստը, վոր սրանից քառասուն կամ հիսուն տարի առաջ ամեն մի կրթված ուսարերկրացու, վոր բնակություն եր հաստատում Անդլիայում, անախորժ զարմանք եր պատճառում այն բանը, ի՞նչը նրան պետք է թվար անդլիական «պատվարժան» միջին դասակարգի կրօնական կեղծ բարեպաշտություն կամ խելացնորություն: Յես այժմ ցույց կտամ, վոր այն ժամանակվա անդլիական պատվարժան միջին դասակարգը ամենեին ել այնքան հիմար չեր, ինչպես այդ թվում եր ինտելիգենտ ուսարերկրացուն: Այդ դասակարգի կրօնական ձգտումներն ունեն իրենց բացարությունը:

Յերբ Յեվրոպան դուրս յեկավ միջնադարից, քաղաքային բուրժուազիան, վորը գտնվում եր վերելքի պրոցեսում, նրանում հեղափոխական տարրն եր: Ճանաչված այն դիրքը, վոր նա զրավել եր իր համար միջնադարյան Փեռլալական հասարակակարգի ներսում, արդեն չափաղանց նեղ եր դարձել զեպի ծալալուն ունեցած նրա ձգտման համար: Բուրժուազիայի ազատ զարգացումը արդեն անհամատեղելի յիշ դարձել Փեռլալական հասարակակարգի հետ, Փեռլալական սիստեմը պետք է ընկներ:

Բայց Փեռլալական սիստեմի ինտերնացիոնալ մեծ կենտրոնը հաստեական կաթոլիկ յեկեղեցին եր: Զնայած

\* Անդլիերեն աեքսում: Հրբիտանական պատվարժանության համար: Խմբ:

բոլոր ներքին պատերազմներին, նա ամբողջ Փեռլալական Արևմտյան Յեվրոպան միավորում եր մի հսկայական քաղաքական ամբողջության մեջ, վորը հակառակության մեջ եր դանշում հայտաբարեկես ինչպես հունական-ուղղափառ, նույնպես և մահմեդական աշխարհի հետ: Նա Փեռլալական հասարակակարգը ըրջապատեց աստվածապես չորսի սրբազն փայլության վայրով: Իր սկզբական հիերարխիան նա հաստատեց Փեռլալական որինակի համեմատ, և, վերջինիրան, նա ամենախոչը Փեռլալական տիրակալն եր, վորովհետեւ նրան եր պատկանում կաթոլիկական ամբողջ հողատիրության յերրորդ մասից վոչ պակասը: Նախքան առանձին վերը բարձրացնելու յիրկում աշխարհիկ Փեռլալականության դեմ պայքարի մեջ մտնելը անհրաժեշտ եր կործանել նրա այդ կենտրոնական սրբազն կաղմակերպությունը:

Սակայն բուրժուազիայի ծագկմանը զուգընթաց քայլ առ քայլ հետեւում եր դիտության հսկայական աճումը: Վերանորոգվեց հետաքրքրությունը դեսպի ասուլաբաշխությունը, մեխանիկան, Փիզիկան, անատոմիան, Փիզիոլոգիան: Իր արդյունաբերությունը զարգացնելու համար բուրժուազիային հարկավոր եր այնպիսի գիտություն, վորը հետազոտեր Փիզիկական մարմինների հատկությունները և բնության ուժերի արտահայտման ձևերը: Իսկ մինչև այդ ժամանակ գիտությունը յեկեղեցու խոնարհ աղաթինն եր, և նրան թույլատրված չեր հավատի առհմանած սահմաններից յեկեղեց: Կարծ նա ամեն բան եր, բայց վոչ գիտություն: Այժմ գիտությունն ապատամբել է յեկեղեցու զեմ: Բուրժուազիան գիտության կարիք եր զգում և մասնակցեց այդ ապստամբությանը:

Այսպիսով, յես շոշափեցի յերկու կետ, վորոնցում առ բուրժուազիան պետք է ընդհարվեր գոյություն ունեցող յեկեղեցու հետ: Բայց սա բավական կլինի ապացուցելու համար, վոր, նախ կաթոլիկ յեկեղեցու պրեակնզիաների դեմ մզած պայքարում ամենամեծ մասնակցությունն ունեցավ հենց այդ դասակարգությունիցիան: յերկորդ



վոր Փեռղալիզմի դեմ մղվող յուրաքանչյուր պայքար այն ժամանակ պետք է ընդուներ կրոնական զգեստավորում, ուղղվել առաջին հերթին յեկեղեցու դեմ: Սակայն յեթե ժարտակոչը հնչում էր համալսարաններից և քաղաքների գործարար մարդկանց կողմէց, ապա նա անխուսափելիորեն ուժեղ արձագանք էր գտնում գյուղական բնակչության ժամաների մեջ, գյուղացիների մոտ, վորոնք ամենուրեք կատաղի պայքար ելին մղում իրենց հոգևոր ու աշխարհիկ Փեռղալիզմածառերերի դեմ, և ընդունին՝ հենց գոյության պայքար:

Յեկրոպական բուրժուազիայի մեծ պայքարն ընդդեմ Փեռղալիզմի՝ բարձրագույն լարման հասավ յերեք խոշոր վճռական ճակատամարտերում:

Առաջինն այն եր, վորը մենք անվանում ենք ուժորմացիա Գերմանիայում: Յեկեղեցու դեմ խոռվություն սարքելու կութերի կոչը քաղաքական յերկու ապստամբություն առաջ բերեց, սկզբում—սոորին ազնվականության ապստամբությունը Ֆրանց Ֆոն-Զիկինդենի առաջնորդությամբ 1523 թ., իսկ Հետո—1525 թ. Գյուղացիական մեծ պատերազմը: Դրանք յերկուսն ել ճնշվեցին գլխավորապես ամենից ավելի շահագրգուված կուսակցության՝ քաղաքային բուրժուազիայի անվճռականության հետևանքով, —այն անվճռականության, վորի սրատճառների վրա մենք այստեղ կանոնականության, վորի սրատճառների մի ծեծկութիւն առաջանձին իշխանների և սերվեց-փոխարկվեց մի ծեծկութիւն առաջանձին իշխանների և կայսերական կենտրոնական իշխանության միջև և այն հետեւանքն ունեցավ, վոր Գերմանիան 200 տարով ջնջվեց Յեկրոպակի քաղաքականորեն ակտիվ ազգերի ցուցակից: Լութերյան ուժորմացիան Գերմանիայում հաստատեց, համենայն դեպուտատի նոր կրոն, —հատկապես այնպիսին, վորպիսին հենց պետք եր արսոլուտ միապետությանը: Հաղիվ եյին գյուղացիները Գերմանիայի հյուսիս-արևելքում լութերականություն ընդունել, և ահա նրանք ազատ մարդկանց առտիճանից իջեցվեցին մինչև ճորտերի գրության:

Բայց այնտեղ, վորան կութերն անհաջողություն կրեց, հաղթանակեց Կալվինը: Նրա դոգման համապատասխանում եր այն ժամանակվա բուրժուազիայի ամենահամարձակ մասի պահանջներին: Նախասահմանության վերաբերյալ նրա ուսմունքը կրոնական արտահայտությունն եր այն փաստի, վոր առեւտրի ու մրցման աշխարհում հաջողությունը կամ սնանկությունը կախված են վոչ թե առանձին անձերի գործունեյությունից կամ հմտությունից, այլ նրանցից անկախ հանդամանքներից: «Կորոշում ե վոչ թե վորևէ առանձին մարդի կամ ըլ կամ դործողությունները, այլ հզորագույն, բայց անհայտ տնտեսական ուժերի վլողորմածությունը»: Յեկեղեց առանձնապես ճիշտ եր տնտեսական հեղաշրջման եպօպիսայում, յերբ բոլոր հին առեւտրական ուղիներն ու առեւտրական կենտրոնները գուրս մղվեցին նորերի կողմէց, յերբ գտնվեցին Ամերիկան ու Հնդկաստանը, յերբ հավատի նույնիսկ հնուց հարդված տնտեսական սիմվոլ—վոսկու և արծաթի արժեքը—տատանվեց և խորտակվեց: Հստվորում կալվինի յեկեղեցական կարգը բոլորովին գեմոկրատական և հանրապետական եր, իսկ վորտեղ արդեն աստվածային թագավորությունն ել հանրապետականացված եր, այստեղ կարո՞ղ եյին արդյոք յերկրային թագավորությունների և Փեղալիկամածատերերի հապատակ մնալ: Յեթե Գերմանիայում լութերականությունը հարմար գործիք եր գերմանական մանր իշխանների ձեռքին, ապա կալվինիզմը հանրապետություն ստեղծեց Հոլանդիայում և ուժեղ հանրապետական կուսակցություններ՝ Անգլիայում և առանձնապես Շոտլանդիայում:

Կալվինիզմի մեջ իր համար պատրաստի մարտական թեորիա զտավ բուրժուազիայի յերկրորդ խոշոր ապստամբությունը: Այս ապստամբությունը տեղի ունեցավ Անգլիայում: Քաղաքային բուրժուազիան առաջին մղումը ավեց նրան, իսկ գյուղական շրջանների միջնակ գյուղացիությունը, յոմենրին (յօմանց), նրան հաղթանակի հասցըեց:

Արխանուալ յերկութիվ է, բոլոր յերեք մեծ բուրժուական հետափոխությունների մեջ վորագիս մարտական բանակ հանդիսանում էն զյուղացիները, և հենց զյուղացիներն են զառնում այս պատակարգը, վորը հաղթանակ նվաճելուց հետո անխուսափելուրեն քայլայիլում և՝ չորհիվ այդ հաղթանակի տնտեսական հետեւանձների: Կրոմիւից հորյուր տարի հետո անդիմական յամենրին գրեթե միանգամայն անհետացավ: Խոկ մինչդեռ չնորհիվ բայցատպիս այդ յամենրի և քաղաքների ոլլերեյական տարրերի միջամտության պայքարը հասցեց մինչև վերջին վճռական վախճանը, և Կարլ I-ը կուռավինարան բարձրացավ<sup>8</sup>: Վորսկեպի բուրժուազիան կարողանար ապահովել հաղթանակի թեկուղ միայն այն պառզեները, վոր այն ժամանակ միանգամայն հասունացել էլին քաղելու համար, անհրաժեշտ եր հեղափոխությունը այլպիսի նպատակից նշանակելի չափով ավելի հետու տառել: բոլորովին նույն բանը յեղագ 1793 թ. Թրանսիստում, 1848 թ. Գիրմանիայում: Բնու յերեսութիւն, իրոք այսպիս և բուրժուական հասարակության զարդացման որևնքներից ժեկը:

Հեղափոխական գործունեյության այս տատությանը հաջորդեց անխուսափելի ռեալիզիսն, վորն իր հերթին նույնպիս հեռու զնաց իր նպատակից: Մի շարք տատանումներից հետո, վերջապես, սահմանվեց ծանրության նոր կենտրոն, վորը և վորպիս յելակետ ծառայեց հետագա զարդացման համար: Անդիմական պատմության այն նշանակոր ժամանակաշրջանը, վորը Փիլիպոեները կոչեցին «մեծ բունու» առնելով, և նրան հաջորդող մարտերն ավարտվում են 1689 թվականի համեմատնար անշան գեղջով, վորը լիբերալ պատմաբաններն անվանում են «վառավոր հեղափոխություն»:

Նոր յելակետը մի կոմպրոմիս եր բարձրացող բուրժուազիայի և նախելին Փետղալ հողատերերի միջև: Վերջիներս, վորոնք այս ժամանակ, ինչպիս և այժմ, համարվում էլին արիստոկրատիա, ապահովության պարզացմանը, վորը անոնեասկան կամ քաղաքական նկատառությունը համաձայնում եր աշխատակցել Փինանական և արդյունաբերական վարչական բուրժուազիայի առաջնորդների հետ: Այսպիսով, հեշտությամբ կարող եր բրականանալ 1689 թվականի կոմպրոմիսը: Քաղաքական «Հաղթական որբՓիները»—պաշտօնները, սինեկուրները, բարձր ոռճիկները—բաժին էլին ընկնում հոգային աղնիականության նշանավոր առներին՝ պարմանով, վոր բավականաշափ պաշտպանվեն Փինանական, արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի

այն բանը առնուլ ուղղու վիճ, վորպեսդի դասնան այն, ինչ վոր Էլուի-Ֆիլիպովը մրանուիայում զարձավ միայն յերկար ժամանակ անցնելուց հետո ապկի պատճին բուրժուաները: Անդիմական բախուցից, հին Փետղալական բարոնները իրար կոտորել ելին Կուրմ իր և Սպիտակ վարդերի<sup>9</sup> պատերազմներում: Նրանց ժառանգները մեծ մասմբ նույնպիս այդ էին ընտանիքների շառավիզներ ելին, առկայն, նրանց տոհմը ակնորս եր առնում այնքան հեռավոր կողմական գծերից, վոր նրանք կաղմում ելին բալորովին նոր կորպորացիա: Նրանց սովորգներն ու ձգուումները շատ ավելի բուրժուական ելին, բան թե Փետղալական: Նրանք հիանալի կերպով գիտելին փողի արժեքը և անհապաղ սկսեցին բարձրացնել հաղային սենատան, հողից գուրս քշելով հարյուրավոր մասը վարձաւաների և նրանց փոխարիներով վոչխարներավ: Հետուրին ՎIII-ը<sup>10</sup> բուրժուազիայից մասնակերով նոր լինդորդեր եր սուղջում, բաշխելով ու չոչին զնով վաճառելով յեկեղեցական կալվածքները, նույն հետեւանքին ելին հասցնում մինչև ԽVII դարի վերջն անընդհան շարունակվող կոնֆիսկացիաներն այն խոչը կալվածքների, վորոնք հետո բաշխվում ելին նորելուկներին կամ կիսանորելուկներին: Այդ պատճառով ել անդիմական «արխտուկրատիան». Հետքին ՎIII-ի ժամանակներից սկսած վոչ միայն արգելք չեր հանգիստնում արդյունաբերության զարդացմանը, այլ, ընդհակառակը, աշխատում եր նրանից ուղղու քաղել: Յեղ ճիշտ, նույնուրություն ել գոնզում եր խոշոր հոգատերերի այնպիսի մաս, վորը անոնեասկան կամ քաղաքական նկատառությունը համաձայնում եր աշխատակցել Փինանական և արդյունաբերական վարչական բուրժուազիայի առաջնորդների հետ: Այսպիսով, հեշտությամբ կարող եր բրականանալ 1689 թվականի կոմպրոմիսը: Քաղաքական «Հաղթական որբՓիները»—պաշտօնները, սինեկուրները, բարձր ոռճիկները—բաժին էլին ընկնում հոգային աղնիականության նշանավոր առներին՝ պարմանով, վոր բավականաշափ պաշտպանվեն Փինանական, արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի

տնտեսական շահերը։ Այդ տնտեսական շահերն այն ժամանակ արգեն բավականաչափ ուժեղ եյին։ վերջին հաշվով նրանք իրենցով վորոշում եյին ընդհանուր ազգային քաղաքականությունը։ Իհարկե, գոյություն ունեյին տարածայնություններ այս կամ այն հարցի շուրջը, սակայն արիստոկրատական ոլիգարքիան չափազանց լավ եր հասկանում, վոր իրեն սեփական տնտեսական բարեկեցությունը անխղելի շղթայով կապված և արդյունաբերական և առևտրական բաւրժուազիայի ծաղկման հետ։

Այս ժամանակներից սկսած բուրժուազիան դարձավ Անդլիայի տիրապետող դասակարգերի համեստ, բայց ճանաչված մասը։ Նրանց հետ մեկտեղ նա շահագրգուված եր ժողովրդի աշխատավոր վիթխարի մասսաներին ճնշելու գործում։ Վաճառականը կամ ֆարբեկանուը իր գործակատարների, իր բանվորների, իր սպասավորների վերաբերմամբ ինքը զրայլում եր կերակրող-ախրոջ, կամ, ինչպես գեռ վերջերս արտահայտվում եյին Անդլիայում, «բնական պետի» դիրք։ Նա պետք է նրանցից հնարավոր չափով ավելի շատ քանակի հնարավոր չափով ավելի լավ վորակի աշխատանք քամեր, այս նպատակի համար նա պետք է գաստիարակեր նրանց պատշաճ հնազանդության վորով։ Նա ինքը կրոնապաշտ եր։ Նրա կրոնը նրան ընձեռեց մի դրոշ, վորով նա հաղթեց թագավորին ու լորդերին։ Շուտով նա այդ կրոնի մեջ հայտարենց նաև միջոց այն բանի համար, վորպեսզի մշակի իր բնական հպատակներին և նրանց հնազանդ գարձնի այն տերերի հրամաններին, վորոնց նրանց գլխին կարգել և ստովածային։ անիմանալի նախախնամությունը։ Կարծ ասած՝ անդլիական բուրժուան այդ ժամանակից սկսած դարձավ «սոորին դասերին»— արտադրող վիթխարի ժողովրդական մասսային—ճնշելու մասնակիցը, և այս դեպքում զործադրված միջոցներից մեկը կրոնի ազգեցությունն եր։

Բայց սրան միացավ մի ուրիշ հանդամանք ևս, վոր ուժեղացրեց բուրժուազիայի կրոնական հակումները—մա-

տերիալիզմի ծաղկումն Անդլիայում։ Այս նոր անաստված ուսմունքը վոչ միայն սարսափի մեջ եր գցում բարեպաշտ բուրժուային,—ի լրումն այդ ամենի նա իրեն հայտարարում եր վորպես մի փիլիսոփայություն, վորը իսկը հարմար և գալիս գիտնական ու կրթված մարդկանց համար, ի հակակշիռ այն կրոնի, վորը բավականաչափ լավ և չկըրթված, ահազին ժողովրդական մասսայի համար, ներառյալ այստեղ նաև բուրժուազիային։ Հոբրով հետ մեկտեղ այդ ուսմունքը հանդես յեկավ ի պաշտպանություն թագավորական ամենազորության և արսուու մոնարխիային կոչում եր սանձահարելու այդ քայլուս ցածրացածի վորքիկին], այսինքն՝ ժողովրդին։ Նույնպես և Հոբրովի հետեւողների—բոլինգբրուկի, Շեֆտարերի և այլոց—մոտ մատերիալիզմի նոր, դեմուտական ձեւը մնաց վորպես արիստոկրատական ուսմունք ընտրյաների համար, ուստի և մատերիալիզմն ատելի յեր բուրժուազիային վոչ միայն իր կրոնական հերետիկոսության պատճառով, այլև իր անտիբուրժուական քաղաքական ուղղության պատճառով։ Ահա թե ինչու, ի հակազրություն արիստոկրատիայի մատերիալիզմի ու դեկզմի, հատկապես բողոքական սեկտաներն եյին, վորոնք թե՛ դրոշ և թե՛ մարտիկներ չեին մատակարարում Ստյուարտների գեմ մզվող պայքարի համար, առաջ եյին քաշում պրոգրեսիվ բուրժուազիայինաև դիմավոր մարտական ուժերը և դեռևս այժմ ել կազմում են «մեծ իրերալ կուսակցության» հիմնական վողնաշարը։

Մինչ այդ մատերիալիզմն Անդլիայից վերագաղթեց Ֆրանսիա, վորտեղ նա գտավ յերկրորդ մատերիալիստական փիլիսոփայական դպրոցը, վորը դուրս եր յեկել կարտեզյան փիլիսոփայությունից, վորի հետ և ծուլվեց նա։ Ֆրանսիայում ևս նա սկզբում մնում եր վորպես բացառապես արիստոկրատական ուսմունք։ Բայց նրա հեղափոխական բնույթը շռւտով յերեան յեկավ։ Ֆրանսական մատերիալիստները իրենց քննադատությունը միայն կրոնի բնագավառով չօահամատնափակեցին։ Նրանք քննադատում եյին իրենց ժամանա-

կի յուրաքանչյուր գիտական տրադիցիա, յուրաքանչյուր քաղաքական հիմնարկ: Իրենց թեորիայի ընդհանրական գործադրելիությունն ապացուցելու համար նրանք ընտրեցին ամենակարճ ճանապարհը. նրանք հսկաբժակ կերպով գործադրեցին այն դժուության բոլոր որյեկտների վերաբերմամբ այն հսկայական ազատության մեջ, վորից նրանք ստացել են իրենց անունը, «Ենցիկլոպեդիայի» մեջ: Ասպիսով, այս կամ այն ձևով, —իրեն բացահայտ մասերիալիով կամ իրեն դեմք, մատերիալիզմը դարձավ ամրով կրթիած յերիտասարդության աշխարհայացքը Ֆրանոիայում: Յեվ նրա աղջեցությունն այնքան մեծ եր, վոր մեծ հեղափոխության ժամանակ, այդ ուսմունքը, վոր լույս աշխարհ ելին հանել անդիքական ռոյալիստները, Փրանսական՝ Հանրապետականերին ու տեսորիստներին թեորիական դրոշ ընձեռեց ու «Մարդու իրավունքների դեկլարացիայի» հսմար անքստ տվեց:

Ֆրանսական մեծ հեղափոխությունը բուրժուազիայի յերրորդ ապստամբությունն եր, բայց առաջինն եր, վոր միանգամայն դեն նետեց իր վրայից կրօնական հազոււստը, և վորտեղ պայքարը տեղի յեր ունենում բացահայտ քաղաքական հողի վրա: Նա նմանապես առաջին ապստամբությունն եր, վորտեղ պայքարը հասցվեց մինչև վերջը, մինչև մարտնչող կողմերից մեկի՝ հատկապես արիստոկրատիայի լիակատար վոչնչացումը, և մինչև մյուսի՝ հատկապես բուրժուազիայի լիակատար հաղթանակը: Անդիքայում հաջորդական կապը մինչհեղափոխական և հետհեղափոխական հիմնարկների միջև և կոմպրոմիսը խոչըր հոգատերերի ու կապիտալիստների միջև իրենց արտահայտությունը գտան դատական պրեցենտների հուջորդականության մեջ, ինչպես նաև Փեոդալական իրավական ձևերի հարգալից պահպանան մեջ: Ֆրանսակայում, ընդհակառակը, հեղափոխությունը վերջնականապես խողեց անցյալի տրադիցիաների հետ ունեցած կապերը, վոչնչացրեց Փեոդալիզմի վերջին հետքերը և «Քաղաքացիական կողեքսի» մեջ հին հոռմական

իրավունքը վարպետորեն հարմարեցրեց նորադույն կապի-տալիստական հարաբերություններին, —դա գրեթե կտտա-ըյալ արտահայտությունն եւ իրավաբանական հարաբե-րությունների, վորոնք բղխում են տնտեսական զարդացման այն աստիճանից, վորը Մարքն անվանում եւ «ապրանքա-յին արտադրություն»: Հարմարեցրեց այն աստիճան վար-պետորեն, վոր որենքների այդ հեղափոխական Փրանսական կողեքսը գեռնս այժմ ել բոլոր մյուս յերկրներում, —չբա-ցառելով նաև Անդիքան, —սեփականության իրավունքի ու-փորմների ժամանակ ծառայում եւ վորակես որինակ: Ընդումին, տակայն, չպետք եւ մոռանալ մի բան. անդիքական իրավուն-քը շարունակում եւ կապիտալիստական հասարակության տնտեսական հարաբերություններն արտահայտել բարբարո-սորեն-ֆեոնդալական բարբառով, վորն այնքան եւ համապա-տասխանում իր արտահայտած սուրկային, վորքան անդ-լիքական ուղղագրությունը՝ անդիքական արտասանությա-նը. —vous écrivez Londres et vous prononcez Constantinople [դուք զբում եք Լոնդոն, բայց կարգում եք Կոստանդնուպոլիս], — ասել ե մի Փրանսացի: Սակայն դրա փոխարեն հենց այդ նույն անդիքական իրավունքը հանդիսանում ե միակը, վորը զարերի ընթացքում պահպանել և Ամերիկա ու գաղութներն ե փոխադրել այն անձնական աղատության, տեղական ինք-նավարության և ամեն մի կողմնակի միջամտությունից, բացի զատականից, ապահովված լինելու լավագույն մա-սը, —մի խսոքով՝ այն հինգերմանական աղատությունները, վորոնք կոնտինենտում արսոլուտ մոնարխիստների հշան-ության ներքո բոլորովին անհետացել են և մինչև այժմ գեռնս վոչ մի տեղ լրիվ ծավալով նորից չեն նվաճված:

Վերադառնանք, սակայն, մեր բրիտանական բուրժու-ացին: Ֆրանսական հեղափոխությունը նրան սքանչելի հնա-րավորություն տվեց խորութելու Փրանսական ծովային տու-տուրը կոնտինենտալ մոնարխիստների ոդնությամբ, դրավել Փրանսական զաղությունները և վոչնչացնել Փրանսացիների վեր-ջին պրետենդիտները ծովային մրցակցության նկատմամբ:

Այսպիսին եր այն հիմունքներից մեկը, վորոնք դրդեցին նրան պայքարելու նրա գեմ։ Յերկրորդն այն եր, վոր այդ հեղափոխության մեթոդները նրա ճաշակին արդեն ամենեին չհարմարվեցին, —վոչ միայն այդ հեղափոխության քանի ծածալ» տեսորը, այլ նույնիսկ նրա հենց փորձը՝ հասցելու բուրժուազիայի տիրապետությունը ծայրահեղ առաջանների։ Յեւ ի՞նչ ել պիտի աներ աշխարհում բրիտանական բուրժուան առանց իր արիստոկրատիայի, վորը նրան թե՛ շարժուձեւ եր սովորեցնում (ուսուցչին արժանի շարժուձեւեր), թե՛ նրա համար մողաներ եր հնարում, թե՛ նրան սպաներ եր մատակարարում բանակի համար, յերկրի ներսում կարգի այդ պահպանողի համար, թե՛ նավատօրմի համար, վորը նոր գաղութիային տիրակալություներ և նոր շուկաներ եր նվաճում։ Բայց և այնպես, բուրժուազիայի մեջ այնուամենայիվ կար սրոգընիվ վորքամանություն, —մարդիկ, վորոնց շահերն այնքան ել չեյին շահում կոմպոզիտից։ Այս փոքրամանությունը, վոր կազմված եր գլխավորապես ավելի քիչ ունեոր բուրժուազիայից, դեպի հեղափոխությունը համակրությամբ եր վերաբերվում, բայց պառատմենում նա անդոր եր։

Այսպիսով, վորքան մատերիալիզմն ավելի յեր զառնում Փրանսական հեղափոխության հավատի սիմվոլը, այնքան ավելի ամուր եր կատում իր կրոնին անդիմական աստվածավախ բուրժուան։ Մի՞թե տեսորի և ապօխան Փարիզում ցույց չտվեց, թե ի՞նչ և ստացվում, յերք ժողովրդից խլում են կրոն։ Վորքան մատերիալիզմն ավելի յեր տարածվում ֆրանսիայից դեպի Հարևան յերկրները և ոժանդակություն ստանում ազգակից թերթական հոսանքներից, հատկապես՝ գերմանական միլիտարիայությունից։ Վորքան մատերիալիզմն ու առհասարակ ազատամտությունը կրնուինենում իրոք ավելի եյին գտնում կրթված մարդու անհրաժեշտ հատկանիշը, —անդիմական բուրժուազիան այնքան ավելի համառը եր կառչում իր զանազան կրոնական հավատալիքներին։ Վորքան ել ուժեղ կերպով նրանք տարբերվեցին մեկը մյու-

սից, այսուամենայիվ նրանք բոլորը վճռականապես կրոնական քրիստոնեական հավատալիքներ եյին։

Այն ժամանակ, յեր Ֆրանսիայում հեղափոխությունն ապահովեց բուրժուազիայի քաղաքական հաղթանակը, Սնդ-լիայում Ռւատարը, Արկրայտը, Կարտրայտը<sup>11</sup> և մյուսները առաջին մղումը ավելի դեպի արդյունաբերական հեղափոխություն, վորը միանգամայն տեղափոխեց տնտեսական ուժերի ծանրության կենտրոնը։ Բուրժուազիայի հարստությունն այժմ սկսեց աճել անսահմանորեն ավելի արագ, քան հողացին արխտոկրատիայի հարստությունը։ Հենց բուրժուազիայի ներսում Փինանսական արիստոկրատիան, բանկիրները և այլն՝ Փարբիկանաների համեմատությամբ ավելի ու ավելի սկսեցին նահանջել հետին պլան։ 1689 թվականի կոմպրոմիսը, նույնիսկ այն փոփոխություններից հետո, վոր աստիճանաբար կատարվում եյին հոգուտ բուրժուազիայի, արդեն այլևս չեր համապատասխանում այդ համաձայնությանը մաննակցողների ուժերի հարաբերակցությանը։ Մասնակցողների բնույթը նույնպես փոխվել եր. 1830 թվականի բուրժուազիան շատ ուժեղ կերպով եր տարբերվում նախորդ զարի բուրժուազիայից։ Դեռևս արիստոկրատիայի ձեռքին մնացած քաղաքական իշխանությունը, վորը նա ոգտագործում եր ընդդեմ արդյունաբերական նոր բուրժուազիայի պրետենդիտների, անհամատեղելի գարձավ նոր տնտեսական շահերի հետ։ Հարկ յեղափ վերանորոգել պայքարն ընդդեմ արիստոկրատիայի. պայքարը կարող եր վերջանալ նոր տնտեսական ուժի հաղթանակով միայն։ 1830 թվականի Փրանսական հեղափոխության ազգեցության տակ առաջին անգամն անցկացվեց, չնայած ամբողջ գիմազրությանը, պատլամենական ուժիորմ։ Այդ բանը բուրժուազիայի համար ամենուի կողմից ճանաչված հպորագույն գիրք ստեղծեց պառավատում։ Ապա յեկալ հացի որենքների վերացումը<sup>12</sup>, վորը միանգամ ընդմիշտ հաստատեց բուրժուազիայի, հատկապես նրա առավել զործունյա մասի՝ Փարբիկանաների, դերակցությունը հողային արիստոկրատիայի

նկատմամբ։ Դա բուրժուարդիայի մեծադույն, բայց և միաժամանակ վերջին հաղթանակն եր, վորընա տարավ բացառապես իր սեփական շահերի համար։ Իր բոլոր ավելի հետագա տրիումֆները նա ստիպված յեղավ բաժանել նոր սոցիալական ուժի հետ, վորն սկզբում դործում եր նրա հետ դաշնակցած, բայց հետո հանդես յեկավ նրա մրցակցի դերում։

Արդյունաբերական հեղափոխությունն ստեղծեց խոշոր կապիտալիստ-Փարբիկանաների գասակարգ, բայց դրա հետ մեկտեղ՝ Փարբիկային բանվորների շատ ավելի բաղմաքանակ գասակարգ։ Այս գասակարգը քանակավես անընդհատ մեծանում էր, քանի վոր արդյունաբերական հեղափոխությունը դրավում եր արտադրության մի ճյուղը մյուտի հետեւց։ Նրա քանակության հետ մեկտեղ աճում էր նաև նրա ուժը։ Այդ ուժն արդեն իրեն ցույց եր ամեր 1824 թվականին, յերբ նա ստիպեց պառլամենտին, չնայելով նրա համար դիմագրությանը, վերացնել կուլյցիաների արդարության գեմ յեղած որենքները։ Պառլամենտական ուժորմի ոգտին մղված աղիտացիայի ժամանակ բանվորները կազմում եյին ուժորմների կուսակցության ուաղիկալ թեր։ Յեր 1832 թվականի ակտով նրանք զրկվեցին ձայնի իրավունքից, նրանք իրենց սրահանջները շարադրեցին ժողովրդական խարտիայի (People's charter) մեջ և, ի հակադրություն հացի որենքների դեմ կազմված բուրժուական ուժեղ կիզայի, կազմակերպեցին վորակես չարտիստների անկախ կուսակցություն։<sup>13</sup> Դա մեր ժամանակի առաջին բանվորական կուսակցությունն էր։

Այսուհետեւ 1848 թ. փետրվարին ու մարտին բռնկեցին կոնտինենտալ հեղափոխությունները, վորոնց մեջ բանվորներն այնպիսի կարեռ դեր խաղացին և վորտեղ նրանք, գոնե Փարիզում, հանդես յեկան այնպիսի պահանջներով, վորոնք կապիտալիստական հասարակության տեսակետից վըճ-

\* Հնդկական և Ենդկելի կողմից միայն դիրմաներեն տեսում։

ականապիս անթույլատրելի եյին։ Իսկ զբան հետևեց ընդհանուր ունակցիան։ Սկզբում չարտիստների պարտությունը 1848 թ. ապրիլի 10-ին, հետո բանվորների Փարիզյան ապրաւամբության ճնշումը նույն թվականի հունիսին, այնուհետև 1849 թվականի անհաջողություններն իստավիայում, վենապրիայում, Հարավային Գերմանիայում և, վերջապես, Լուի Բոնապարտի Հաղթանակը Փարիզի վրա 1851 թ. զեկումը երի 2-ին<sup>14</sup>։ Այսպիսով հաջողվեց թեկուղ վորոշ ժամանակով վանվորական պահանջների խրավիլակը, բայց ինչ նաև այդ բանը։ Յեթե բրիտանական բուրժուան արդեն առաջուց ել համոզված եր, վոր անհրաժեշտ և հասարակ ժողովրդին պահել կրոնական սանձի սոսկ, առաջ վորքան ավելի ուժեղ պետք և զգար նա այդ բանի անհրաժեշտությունը այդ բոլոր ապրումներից հետ։ Յեվ, ամենաչնչին ուշադրություն անդամ չղարձնելով իր կոնտինենտալ յեղբայրակիցների ծաղրանքներին, նա առարեցաւը շարունակում եր հազարներ ու տասնյակ հազարներ ծախսել ստորին դասերին ավելացրան քարոզելու։ Համար։ Զրավականակալով սեփական կրոնական սպարատով, նա դիմեց յեղբայր Հովհանթանին, այն ժամանակ կրօնական սպեկուլացիաների մեծագույն կազմակերպչին, և Ամերիկայից ներմուծեց Մուգիի, Սենկիի և այլոց ուժավայլիզմը [«կրոնական վերածությունը»]<sup>15</sup> վերջապես, նա համաձայնեց նույնիսկ այն բանին, վորպեսի ստանա «Փրկության բանակի» վտանգավոր ողնությունը, վորը վերակենդանացնում և հին քրիստոնեայության պրոպագանդայի յեղանակները, դիմում և աղքատներին՝ իրբե աստծու ընտրյաների, պայքարում և կապիտալիզմի դեմ իր կրոնական ձեռվ և այդպիսով զարդարում և հին-քրիստոնեական զասակարգային պայքարի միգանի կողմերը, վորոնք մի գեղեցիկ որ կարող են չափազանց հակատագրական դառնալ այն հարուստ մարդկանց համար, լորոնք այդ գործի վրա այժմ կանխիկ դրամներ են ծախսում։

Հստ յերկութիւն, կարելի յի վորակես պատմական զարգացման որենք ընդունել այն բանը, վոր իմքրոպական վոչ

մի յերկրում բուրժուազիային չի հաջողվում, — զո՞նս յերկարատև ժամանակով՝ բաղաքական իշխանությունը դրավել հենց այնպիսի բացառիկ ձևով, ինչպես այն գրավել եր ֆեոդալական արիստոկրատիան միջին դարերի ընթացքում։ Նույնիսկ Ֆրանսիայում, վորտեղ Փեոդալիզմն արժատախիլ եր արված, բուրժուազիան ամբողջությամբ վերցրած միայն կարճատև ժամկետներով եր լիակատար կերպով գրավում կառավարական իշխանությունը։ Լուի-Ֆիլիպի որով, 1830-ից մինչև 1848 թ., տիրապետում եր բուրժուազիայի միայն աննշան մասը։ շատ ավելի մեծ մասը բարձր ցեղի հետեւնքով զրկված եր ընտրական իրավունքներից։ Յերկրորդ հանրապետության ժամանակ, 1848—1851 թ. թ., տիրապետում եր բուրժուազիան ամբողջությամբ վերցրած, բայց ընդունենք միայն յերեք տարի։ նրա անընդունակությունը ձանապարհ հարթեց Յերկրորդ կայսրության համար։ Միայն այժմ, Յերրորդ հանրապետության որով<sup>16</sup>, բուրժուազիան, վորպես ամբողջություն, քսան տարի դիմացավ կառավարման զեկի մոտ, բայց այժմ արդեն նա անկման միիթարական նշաններ եւ հայտաբերում։ Բուրժուազիայի յերկարատև տիրապետությունը մինչև այժմ հնարագոր եր միայն այնպիսի յերկրներում, ինչպես Ամերիկան, վորտեղ Փեոդալիզմ չկար և վորտեղ հասարակությունը հենց սկզբից ստեղծվել ե բուրժուական Փունդամենտի վրա։ Յեղ նույնիսկ Ֆրանսիայում ե Ամերիկայում արդեն բարձրագույն թակում են դռները բուրժուազիայի ժամանակները—բանկուները։

Անգլիայում բուրժուազիան յերբեք անբաժան իշխանության տեր չի յեղել։ Նույնիսկ նրա հաղթանակը 1832 թվականին արիստոկրատիային թողեց զրեթե բացառապես տիրապետելու կառավարական բոլոր բարձր պաշտոնները։ Այն հնագանդությունը, վորով հարուստ բուրժուազիան հաշտվեց այդ բանի հետ, ինձ համար անհասկանալի յերմում մինչև այն ժամանակ, յերե մի գեղեցիկ որ խոշոր մերերաւ Փարբեկանու Վ. Ա. Ֆորտերը մի ճառ արտասա-

նեց, վորն ուղղված եր բրեդՓորդյան յերիտասարդությանը և վորի մեջ աղերսում եր նրան, վոր նա իր սեփական բարիքի համար այնուամենայնիվ ուսումնասիրի Փրանսիրեն լեզուն։ Ընդամեն նա պատմեց, թե ինքն իր աչքին ի՞նչ հեմարն ե յերեացել, յերը, մինիստր դառնալով, միանգամբ ընկալավագել, այնպիսի հասարակության մեջ, վորտեղ Փրանսիրեն լեզուն առնվազն նույնքան անհրաժեշտ եր, վորքան անդիերենը։ Յեղ իրոք, այն ժամանակիան բուրժուաները միջին հաշվով միանգամբ անկիրթնորելուներ եյին, վորոնք կամա թե ակամա արիստոկրատիային պիտի թողնեցին բոլոր այն բարձր կառավարական պոստերը, վորտեղ պահանջվում եյին այլ հատկություններ, քան գործնական հարպեկությամբ համեմված կղզիական սահմանափակությունն ու կղզիական սնապարծությունը։ Դեռևս այժմ ել անվերջ լրագրական վեճերը «middle class education» [բուրժուական կրթություն] թեմայի մասին դրսերում են, վոր անգլիական բուրժուազիան գայուն շաբաթի մեջ կամաց կամաց ամսագրերում ել իրեն անպատճառ համարել ավելի լավ կրթություն համար, այլ իրեն համար վնասում ե ինչ-վոր ավելի համեստ բան։ Ռւսական միանգամբայն բնական ե, վոր հացի որենքների վերացումից հետո ել այն մարզիկ, վորոնք կարողացել եյին

\* Ասենք գործնական հաբարերությունների մեջ ևս ազգային-շովին նիստական սնապարծությունը շատ վատ խորհրդատու յե։ Մինչև ամենավերջին ժամանակական սովորական անգլիական Փարբեկանալը անգլիացու համարում սուրբ էկզով խոսելը, բացի իր սեփական լեզից, և մի վորոց ստորագրությունը արտաքին առաջիկ մասը—ներմուծումը վաշ պակաս, քան արտահանումը—և վոր անգլիացիների անմիջական արտաքին առևտուրը աստիճանաբար սկսել եր սահմանափակվել գաղութներով, Զինաստանով, Միացյալ Նահանգներով և Հարավային Ամերիկայով։ Եղ ավելի քիչ եր նա նկատում, վոր այդ զերմանացիներն արտասահմանում առևտուր եյին անում ուրիշ գերմանացիների

Հաղթանակ ձեռք բերել, այդ Կորպենները, Բրայտները, Ֆորստենները և այլն, հետացվեցին յերկրի կառավարության մեջ վորեւ մասնակցություն ունենալուց, և միայն քամն տարի հետո ունչություն վերաբերյալ նոր ակտը նրանց առաջ, վերջապես, բայց արեց մինիստրության դրսերը: Նույնիսկ մինչև այժմ ել անդիմական բուրժուազիան այնքան խորն է համակած իր ավելի ցած հասարակական դիրքի գիտակցությամբ, վոր նա իր սեփական և ժողովրդական փողերով պահում եղատարկապրաների մի փառահեղ կաստա, վորը պետք է բոլոր հանդիսավոր դեպքերում արժանավոր կերպով ներկայացնի ազգը, և բուրժուազիան իր համար բարձրագույն պատիվ է համարում, յերբ վորեւ բուրժուա արժանի յեւ համարվում միացվելուայդ, վերջիվերջո հենց բուրժուազիայի կողմից արտադրված, գակ կորպորացիային:

Այդպիսով, արդյունարերական ու առևտրական բուրժուազիան դեռ չեր կարողացել հողային արխտոկրատիային վերջնականապես հեռացնել քաղաքական իշխանությունից, յերբ պատմության արենայի վրա հանդես յեկալ մի նոր մըցորդ, բանվոր դաստիարագը: Զարտիստական շարժումից և կոնտինենտալ հեղափոխություններից հետո վրա հասած

հետ, և նրանք բոլորը ժամանակի ընթացքում առևտրական դաշտությունների մի ամբողջ ցանց կազմեցին ամբողջ աշխարհում: Խոհ յերբ սրանից քառասուն տարի առաջ Գերմանիան սկսեց լուրջ կերպով արտադրել արտահանման համար, ապա այդ առևտրական գաղութները նրան հիմնալիք ծառայություն մատուցեցին, վորպեսզի այդքան կարճ ժամկետում նրան փոխարկին հաց արտահանող յերկրից առաջնակարգ արդյունարերական յերկրի: Այս ժամանակ, վերջապես, սրանից տաս տարի առաջ, անդիմական Փարբեկանին անհանդասություն տիրեց, և նոր հարցում արեց իր գետպաններին և հյուպատոսներին, թե այդ ինչպես պատճեն, վոր իր գնորդները ցըիլ են դալիս: Միաձայն պատասխանն այսպիսին եր. 1) զուք չեք ուսումնասիրում ձեր դնորդի լեզուն, այլ պահանջում եք, վարպեսզի նա խոսի ձեր լեզվով, և 2) զուք նույնիսկ չեք ել աշխատում բավարարել ձեր գնորդի պահանջունքները, սովորություններն ու հաշվերը, այլ պահանջում եք, վորպեսզի նա ընդունի ձերը՝ անպահականը:

ուեակցիան և սրան միացած՝ անդիմական արդյունարերության չտեսնված ծաղկումը 1848-ից մինչև 1866 թ. (այդ ծաղկումը սովորաբար բացատրում են սոսկ միայն առևտրի ազատությամբ, բայց նա իր ծաղկմամբ շատ ավելի պարտական է յերկաթուղիների, ովկիանոսային չողենավերի և առհասարակ հաղորդակցության միջոցների հսկայական զարգացմանը) բանվորներին նորից կախման մեջ դրին լիբերալ կուսակցությունից, վորտեղ նրանք, ինչպես և մինչև չարտիստական շարժումում, կազմում եյին ուստիկալ թեր: Սակայն, բանվորների պրետենզիաներն ընտրական իրավունքների վերաբերյալ՝ հետզհետե անհաղթահարելի եյին դառնում: Մինչդեռ լիբերալներին ղեկավարող վիճերը դեռևս շարունակում եյին վախենալ, Դիզրեսլին ցույց տվեց իր գերազանցությունը. նա ողտագործեց տորիների համար նպաստավոր մօմենտը, քաղաքային ընտրական ոկրուգներում ընտրական իրավունքի մասին որենքը մտցրեց ամեն մեջ, և դրա հետ կապեց ընտրական ոկրուգների փոփոխությունը: Դրան չուտով հետևեց գաղանի քվեարկության հաստատումը (the ballot). այնուհետեւ, 1884 թվականին տնաստերերի ընտրական իրավունքը տարածվեց բոլոր ոկրուգների վրա, այդ թվում՝ նաև գրաֆություններում, և կատարվեց ընտրական ոկրուգների նոր բաշխում, վորը մի վորոշ չափով այնուամենային նրանց հակասարեցնում եր միջանց: Շնորհիվ այս ամենի՝ բանվոր դաստիարակի ազդեցությունն ընտրությունների վրա այնքան աճեց, վոր այժմ բանվորները 150—200 ընտրական ոկրուգներում կազմում են ընտրուների մեծամասնություն: Բայց տրադիցիայի առջև խոնարհվելու ավելի լավագույն գաղուց չկա, քան պատլամենտական սիստեմը: Յեթե բուրժուազիան ակնածանքով ու յերկյուղով եր նայում այն խմբին, վորին լորդ Չոն Մաններսը կատակով «մեր հին աղնվականնությունն» եր անվանում, ապա բանվորական մասսան ևս հարգանքով ու պատկառանքով եր նայում այն ժամանակ այսպես կոչված «լավագույն դաստիար-

գին», բուրժուազիային։ Յեվ իսկապես, տասնհինգ տարեա  
սրանից առաջ բրիտանական բանվորն որինակելի բանվոր եր,  
և նրա ամենահարդարից վերաբերմունքը գեղի նրան վարձո-  
ղի դերը, նրա ինքնասահմանափակումն ու հեղությունն  
այն դեպքերում, յերբ նա իր համար իրավունքներ եր պա-  
հանջում, ամոքիչ բարզամ եյին լցում այն վերքերի վրա,  
վոր հասցրել եյին մեր դերմանական կաթեղերսոցիստ-  
ներին նրանց Հայոքնակիցների—դերմանական բանվորների  
անուղղելի-կոմունիստական և հեղափոխական ձղումները։

Սակայն անդլիսական բուրժուաները լավ գործարաց  
մարդիկ եյին և դերմանական պրոֆեսորներից ավելի հեռա-  
տես եյին։ Միայն հանդամանքների ճնշման տակ նրանք  
իրենց իշխանությունը բաժանեցին բանվորների հետ։ Զար-  
տիստական չարժմտն ժամանակ նրանք ըմբռնեցին, թե ինչի  
յև ընդունակ ժողովարդը, այդ քուր robustus sed malitiousus-ը  
[քաջառողջ, բայց չարաճճի փոքրիկը]։ Այն ժամանակիվանից  
սկսած բուրժուազիան կամա թե ակամա ստիպված յեղակ  
ընդունել ժողովրդական խարսխայի պահանջների նշանա-  
կելի մասը, և նրանք դարձան յերկրի որենքը։ Այժմ ավելի  
քան յերբեցք կարևոր եր ժողովրդին բարոյական միջոցնե-  
րով սանձած պահել։ Իսկ առաջին և կարեռազույն միջոցը,  
վորով ներգործում են մասսաների վրա, մնում եր ելի նույն  
կրոնը։ Այստեղից—տերաբերների ուժեղանալը դպրոցական  
վարչություններում, այստեղից—բուրժուազիայի հետզհետե  
աճող ինքնահարկումը բարեպաշտ դեմագոգիայի ամեն տե-  
սակ յեղանակների համար, ծիսականությունից սկսած և  
վերջացրած «Փրկության բանակով»։

Յեվ այժմ վրա հասավ բրիտանական պատվարժան Փի-  
լիստերության\* հազիանակը կոնտինենտալ բուրժուայի  
ազատամտության և կրօնական անտարերության վերաբեր-  
մամբ։ Ֆրանսական ու գերմանական բանվորները զարձան  
բունտովչչիկներ։ Նրանք բոլորն ել վարակված եյին սոցիա-

\* Առգլեն տեքստում։ «Բրիտանական պատվարժանություն»։  
Խմբ։

չիպմով և ընկումին, չատ հասկանալի նկատառումներով,  
այնքան ել արգեն մտահոգված չեյին իշխանությունը գրա-  
վելու համար միջոցներ ընտրելու գործում որինականու-  
թյունը պահպանելով։ Այդ քուր robustus-ը [քաջառողջ փոք-  
րիկը] իսկապես վոր այնուեղ որեցոր ավելի ու ավելի՝ տա-  
կանական ու գերմանական բուրժուային, իբրև ծայրահեղ մի-  
ջոց, յեթե վոչ սուսուփուս մի կողմ նետել իր ազատամտու-  
թյունը, վորպես մի հանդուպն յերեխա, վորը, զգալով,  
վոր իրեն քանի զնում ավելի ու ավելի յե հաղթում ծո-  
վախար, դեն և զցում վասած սիդարը, վորով նա պճնամո-  
լություն եր անում նավի վրա։ Մեկը մյուսի հետեից աստ-  
վածուբացները սկսեցին արտաքուստ բարեպաշտ կերպա-  
րանք ընդունել, հարզանքով խոսել յեկեղեցու, նրա ուս-  
ամուսնքի, ծեսերի մասին և իրենք սկսեցին կատարել այդ  
ծեսերը, վորչափով չեր կարելի նրանց զանց անել։ Ֆրան-  
սական բուրժուաները ուրբաթ որենը հցածարվեցին մսից,  
իսկ գերմանուկան բուրժուաները մինչև չչմելը նստում եյին  
իրենց յեկեղեցական տեղերում, լսելով բոլոքական անվերջ  
քարոզներ։ Իրենց մատերիալիզմով բուրժուաները փորձանքի  
մեջ եյին ընկել։ «Կրոնը պետք է պահպանի ժողովրդի հա-  
մար»—այս և լիակատար կործանումից հասարակությունը  
փրկելու վերջին ու միակ միջոցը։ Ի դժբախտություն հենց  
իրենց, նրանք այդ բանը հայտարենցին միայն այն ժամա-  
նակ, յերբ նրանք, իրենց կողմից, ամեն հնարավոր բան  
արել եյին, վորպեսզի ընդմիշտ խորտակեն կրոնը։ Յեվ այն  
ժամանակ վրա հասավ մի մոմենտ, յերբ բրիտանական  
բուրժուան, իր հերթին, կարող եր նրանց վրա ծիծաղել  
և զոչել, հիմարներ, այդ բանը յես կարող եյի ձեզ ասել  
սրանից դեռ յերկո՞ւ հարյուր տարի առաջ։

Բայց և այսպես յես վախենում եմ, վոր վո՞չ բրիտա-  
նական բուրժուայի կրոնական բժամտությունը, վո՞չ կոն-  
տինենտալ բուրժուայի post festum [հւախի թվով] վրա հաս-  
նող զարձը չեն կարողանա ափերի մեջ խցկել հետզհետե

ավելի վեր բարձրացող պրոլետարական հեղեղը։ Տրաղիցիան-դա մեծ արգելակ է, դա իներցիայի ուժն և պատմության մեջ։ Բայց նա միայն պասսիվ է և այդ պատճառով պետք է ընկնի։ Կրոնը նույնպես յերկար ժամանակ չի կարող կապիտալիստական հասարակության համար իրքեւ պատվար ծառայել։ Յեթե մեր իրավաբանական, փիլիսոփայական և կրոնական պատկերացումները հանդիսանում են տվյալ հասարակության մեջ տիրապետող տնտեսական հարաբերությունների առավել մոտավոր կամ առավել հեռավոր ճյուղավորումները, ապա այդ պատկերացումները չեն կարող յերկար ժամանակ պահպանվել այն բանից հետո, յերբ տնտեսական հարաբերություններն արմատավես փոխվել են։ Կամ մենք պետք են հավատանք գերբնական հայտնության, կամ համաձայննք, վոր վոչ մի կրոնական քարոզ ի վիճակի չե պահպանելու կործանվող հասարակությանը։

Եեկ իսկապես, Անգլիայում բանվորները նույնպես սկսել են կրկին չարժվել։ Անկառիած է, նրանք կաշկանդված են զանազան տրաղիցիաներով։ Ամենից առաջ՝ բուրժուական տրաղիցիաներով, այսպես, որինակ, այն չատ տարածված նախապաշարունքով, թե իրը հնարավոր են միայն յերկու կուսակցություններ, կոնսերվատիվ և լիբերալ, և թե իրը բանվոր դասակարգն իր պատությանը պետք ե ձգտի հզոր լիբերալ կուսակցության ոգնությամբ։ Այնուհետև բանվորական տրաղիցիաներով, վորոնք ժառանգված են բանվոր դասակարգի ինքնուրույն յերույթների առաջին անվատահ փորձերի ժամանակվանից։ բայմաթիվ հին արեգ-յունիոններում այդպիսի տրաղիցիա յե հանդիսանում այն բոլոր բանվորների արձակումը, վորոնք կանոնավոր աշակերտություն չեն արել։ այդ նշանակում է միայն այն, վոր յուրաքանչյուր այդպիսի արհեստակցական միություն իր համար պատրաստում ե սեփական շրայիրեխերներ։ Բայց չնայելով այդ ամենին, անգլիական բանվոր դասակարգն առաջ է շարժվում, ինչպես ստիպված յեղան վշտահար իեր-

պով հաղորդել այդ մասին իր կաթեղեր-սոցիալիստական յեղբայրակիցներին ինքը պարոն պրոֆեսոր Բրենտանոն։ Բանվոր դասակարգը շարժվում է—ինչպես ամեն բան Անգլիայում—զանուար, չափակցված քայլերով, մերթ տատանվելով, մերթ խարսափումով բայլականաչափ անպտուղ փորձեր անելով։ Տեղ-տեղ նա չարժվում է չափազանց անվտահությամբ դեպի սոցիալիզմ քար, աստիճանաբար ներծծելով իր մեջ նրա եյությունը։ Նա չարժվում է, և շարժումն ընդգրկում է բանվորների մի շերտ մյուսի հետեւց։ Ներկայումս նա մեռյալ քնից արթնացրել է լոնդոնյան իստ-Ենդի անվարժ բանվորներին, և մենք անսաք, թե ինչ հրաշալի զարկ տվին բանվոր դասակարգին այդ նոր ուժերն իրենց կողմից։ Յեկ յեթե այդ շարժման ընթացքը չի համապատասխանում այս կամ այն քննադատի անհամբեր սպասումներին, ապա թողթե՛ մեկը և թե՛ մյուսը չմուսնան, վոր հենց բանվոր դասակարգն է պահպանում իր մեջ անգլիական ազգային բնավորության լավագույն կողմերը և վոր Անգլիայում դեպի առաջ կատարած յուրաքանչյուր քայլ, յեթե նա արդեն նվաճված է, հետո յերբեք չի կորչի։ Յեթե հին չարտիստների վորդիները, վերը շարադրված պատճառներով, վոչ-բոլորովին այնպիսին եյին, ինչ վոր կարելի յեր սպասել, ապա, ըստ ամենայն հավանականության, թօռներն արժանի կլինեն իրենց պապերին։

Սակայն յելքուպական բանվոր դասակարգի հաղթանակը կախված է վոչ միմիայն Անգլիայից։ Նա կարող է ապահովվել առնվազն Անգլիայի, Թրանսիայի և Գերմանիայի համագործակցությամբ միայն։ Վերջին յերկու յերկրներում բանվորական շարժումը նշանակելի չափով առաջ է անցել անգլիականից։ Գերմանիայում կարելի յե մինչև անդամ արդեն չափել մինչև նրա հաղթանակի մոմենտը մնացած ժամանակ։ Այն հաջողությունները, վոր վերջին քսանհինդ տարում այնտեղ ձեռք է բերել բանվորական շարժումը, իրենց հավասարը չունեն։ Նա առաջ է ընթանում հետզետե ամելի աճող արագությամբ։ Յեթե գերմանական բուրժուապիան

գրսեւորեց իր վողորմելի խեղճությունը և քաղաքական ընդունակությունների, գիսցիսլինայի, կայունության, եներդիայի բացակայությունը, ապա գերմանական բանվոր գառակարգը ցույց տվեց, վոր այդ բոլոր հատկություններին նա տիրապետում և ավելի քան բավարար չափով։ Մոտավորապես չորս հարյուր տարի առաջ Գերմանիան յեվրոպական բուրժուազիայի առաջին խոշոր ապստամբության յելակետն է յեղել. յեթե դատելու լինենք իրերի ներկա դրության տեսակետից, միթե հնարավոր չե, վոր Գերմանիան դառնա բեմ յեվրոպական պրոլետարիատի նաև առաջին մեծ հաղթանակի համար։

20 սպրին 1902 թ.

### ԾԱՆՈԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 ՆԹՄԲԹԱԼԻԳՄ—Հատիներեն նոմեն՝ անուն բառից. միջնադարյան գիտակայության մեջ մի ուղղություն, վորն ընդունում եր, վոր ընդհանուր հասկացությունները իրերի անուններն են միայն, վոր ինֆըստինքյան իդեաները, հասկացությունները ինքնուրույն գյություն չունեն; ի հակադրություն այս ըստ եյության մատերիալիստական ուղղության՝ միջնադարյան գիտակայություն մի այլ ուղղությունը—ուելիզեցը—ուաշտպանում եր այն հայացքը, վոր հասկացությունները ուել (իբական) են ինքնըստինքյան. այս յերկրորդ հոսանքը արտահայում եր իդեալիզմի հայացքներ։

2 Բեկոն (1561—1620)—անդլական գիտակայական մատերիալիստ։

3 Անքանգոր—հին-հունական գիտակայական մուտափոր 500—428 թ. թ. մինչև մեր թվականությունը։ Անաբարդորն ընդդունում եր, վոր բոլոր իրերը կազմված են անվերջ մանր նյութական մասներներից—հոմոյօմերիաներից։

Դեմոկրիտ (460—370 մինչև մ. թ.)—հին-հունական գիտակայական մատերիալիստ։ Դեմոկրիտի ուսմունքի համաձայն՝ տիեզերքը կազմված է համբակենական շարժման մեջ գտնվող նյութական մասնիկներից—ատոմներից։

4 Հոբբս (1588—1679)—անդլական գիտակայական մատերիալիստ։

5 Լոկի (1632—1704)—անդլական գիտական մատերիալիստ։

6 Գենիզմ—գիտակայական մի ուղղություն, վորը ժխտում է կրոնական իրենց անհաստական տառծուլ կուլտով միասին, բայց չի հրաժարվում ասածու գաղափարից, թողնում է ասածուն՝ իրեր ամեն բանի սկզբնապատճառ, իրեր առաջին զարկը ավող ուժ։ Բայց դիտոների կարծիքի՝ ասալված, վոր սկզբը է զրել բնության, սահմանափակված է բնության որենքներով և չի կարող գործել ըստ իր կամայականության, որը արծել այնպիսի հրաշքներ, վորոնք հակառակ են զնում այդ որենքներին։

7 Ազնոստիցիզմ—հունարեն ա՛ ըս, դնոսիս՝ գիտություն բառերից. գիտակայական մի ուղղություն, վորը ժխտում է աշխարհն ըմբռնելու հերապորությունը։ Ազնոստիցիզմի գլխավոր ներկայացուցիչներն

Են. անդլիական փելլսովա Յումը (1711—1776), վորն ընդունում էր, վոր մարդը չի կարող իմանալ, թէ զոյություն ունի՞ արդյոք արտաքին աշխարհը, և գերմանական փելլսովա Կանումը (1724—1804), վորը պնդում էր, վոր արտաքին աշխարհը («ինքնին իրը») զոյություն ունի, սակայն այն իմանալ անհնարին է:

Փրկուրյան բանակի լրունական բարեգործական մի կազմակերպություն Անդլիայում:—10:

8 Նկատի յե առնվաւմ բուրժուական հեղափոխությունն Անդլիայում, վորը տեղի ունեցավ XVII դարի մեջնքին:

Կրոմիլ (1599—1658)—անդլիական բուրժուական հեղափոխության առաջնորդներից մելք:

Կարլ I—անդլիական թագավոր, վորը մահապատճի յենթարկիլից հեղափոխական ժողովրդի կողմից 1649 թ.:—20:

9 Այսպես ելին կոչվում այն պատերազմները, վոր տեղի ելին ունենում անդլիական ֆեոդալների միջև 1451—1485 թ.թ.:—21:

10 Հենրիխ VIII—անդլիական թագավոր 1509—ից մինչև 1547 թ.թ.:

11 Ռւասու (1736—1819)—շոգեմեքենայի զյուտաբարը:

Արկայու (1732—1792)—վատեր-մեքենայի դյուտաբարը:

Կարտրայու (1743—1823)—մեքենայական մանածալործական դադար զյուտաբարը:—27:

12 Հացի որենքներ—այն որենքներն են, վարոնք Անդլիա ներմուծվող հացահատիկը բուրժուազում են րարձր մաքերով: 1830—40 թ.թ. անդլիական բուրժուազին յերկարան պայքար եր մղում հացի որենքները վերացնելու համար, վորովհետեւ հացի որենքները նեղում ելին արդյունաբերության զարգացմանը: Հացային արիստոկրատիան համառ դիմադրում եր հացի որենքների վերացմանը: Պայքարի հետեւ վահանությունը 1842 թ. հացի մաքսերն իշեցվեցին, իսկ 1849 թ. բարուսին վերացվեցին:—27:

13 Զարտիստական շարժումն Անդլիայում 1830—1840 թ.թ. բնդորկել եր անդլիական բանվոր դասակարգի հակայական մեծամասնությունը և պրոլետարիատի առաջին ինքնուրույն քաղաքական շարժումն եր: Այդ շարժումն իր անունը («Զարտիզմ») ստացել եր բանվորների կողմից 1839 թ. պալամենտին տրված խարտիայից (չարտեր), վորը չարտադրում եր նրանց հիմնական պահանջները: 1) ընդհանուր ընտրական իրավունք, 2) ամեն տարի վերընտրվող պատվամենու, 3) պառամենտի անդամների ոռօճի վճարում, 4) պառամենտի ընտրությունների ժամանակ դադանի քվեարկություն, 5) ընտրական հավատար ոկրուգներ, 6) դեպուտատների համար գույքային ցենզի վերացում: Պայքարը հանուն այս պահանջների Անդլիայի բանվոր դասակարգը միքանի տարի շարունակ մղում եր պետքեաների, զործալուների, գեմանարացիների և վաստիցիների, զործալուների, գեմանարացիների և վաստիցիների համար գույքային ցենզի վերացում: Պայքարը հանուն այս պահանջների Անդլիայի բանվոր դասակարգը միքանի տարի շարունակ մղում եր պետքեաների, զործալուների, գեմանարացիների և վաստիցիների, զործալուների, գեմանարացիների և վաստիցիների համար գույքային ցենզի վերացում:

յով: «Զարտիստական գործությունն չարժումը մեծ զեր խաղացքին, տիբավետով դասակարգերին ասիստեցին մի շարք զիջումներ անհե ընտրական սիստեմի բնազավառում, այսպես կոչված՝ «փատած տեղերը» լիկիդացիայի յենթարկելու, «խարտիայի» միքանի կետերն իբականացնելու բնադրավառում: Զարտիզմը խաղաց իր վո՞չ վորը պատմական զերը և տիբավետով դասակարգերի մի մասին դրդեց միքանի զիջումներ, սեփական կատարել մեծ ցնցումներից խուսափելու համար» (Ստալին):—28:

14 1848 թ. ապրիլի 10-ն այն օրն եր, վոր որը չարտիստները նշանակել եյին զբանդիոր գեմոնստրացիա կոնդոնում: Անդլիական կառավարությունը, խոշոր զինված ուժեր քաշելով կոնդոն, չժույլատրեց զեմոնստրացիան: 1848 թ. ապրիլի 10-ից հետո չարժումն սկսեց հետոհետեւ թուլանալ:

1848 թ. հունիսի 22—26-ը—վարելզյան պրոլետարիատի ազգամբությունը: Ազգամբությունը ջախճակալվեց բուրժուացիան կառավարության կողմից, և Փարիզի բարձմահազար բանվորներ, կանայք ու յերեխաններ զալանարար սպանվեցին ու տանջմաններից մատընդցեցին:

1849 թ. ջախճակալվեցին հեղափոխություններն իստալիայում, Վենդիայում, Հարավային Գերմանիայում:

1851 թ. դեկտեմբերի 2-ին Լուի Բնապարար՝ լինելով Փրանսական հանրապետության նախադահ, պետական հեղաշրջում կատարեց, ցրեց ազգային ժողովը և մի տարի հետո իրեն հայտարարեց իմպերատոր:—29:

15 «Ցենդրայիր Հովիաքան»—Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին այս անունն ելին տալիս:

Ուվայալիզմ (կրոնի վերածնությունը)—մի շարժում, վորն իբեն նոյստանի եր գրել վերականգնել ու ամբազուել կրոնի աղջեցությունը մասսաների վրա: Ենդեւսի հրատակած Մուղին և Սենկին ամերիկյան քարոզիչներ ելին, այդ շարժման կաղմակերպելուներ:—29:

16 Յերկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում գոյություն ուներ 1848 թ. փետրվարյան հեղափոխությունից մինչև Լուի Բնապարարի 1851 թ. դեկտեմբերի 2-ի պետական հեղաշրջումը:

Յերկրորդ կայսրությունը՝ Նապոլեոն III-ի կայսրությունն է (1852—1870), ի տարբերություն Նապոլեոն I-ի տաշին կայսրությունից (1804—1814 թ.թ.):

Յերրորդ հանրապետությունը Ֆրանսիայում գոյություն ունի 1871 թվականից մինչև այժմ:—30:



Պարզմանեց Ա. Տ.-Մկրտչյան

Հայերեն թարգմանության խմբագիր Ռ. Վարդապետյան

Տեխն. խմբ. Ս Խաչատրյան

Արքագրիչ Հ. Մանվելյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլուխովի լիազոր Ն. - 2854, հրատ. Ա 696

Պատուի Ա 105, տիրաժ 4.000. Թղթի չափութեանը 84×108<sup>1/2</sup> սմ

(33.440 տպ. նիշ. 1 տպ. մամուլում) 2<sup>1/2</sup> տպ. մամուլ. 1<sup>1/4</sup> թիրթ թուղթ

Հանձնված ե արտադրության 27/V 1939 թ.

Ստորագրված ե տպագրության 15/VI 1939 թ.

Գինը 50 կ.

Կտահրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,  
Երևան, Ալահվերդյան Ա 68

ՀՀ Ազգային գրադարան



NL0173204

ԳԻՒԾ 50 4

Ф. ЭНГЕЛЬС

ОБ ИСТОРИЧЕСКОМ МАТЕРИАЛИЗМЕ  
Армянское издательство полит. литературы  
Ереван, 1939